

**ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՍԲ ԲՈՂՈՔ  
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎՃՌԱԲԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**ՊԱՎԵԼ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

Հայտնի է, որ ՀՀ Սահմանադրության 61-րդ և Մարդու իրավունքներին ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածներում ամրագրված դատական պաշտպանության իրավունքը չի սահմանափակվում միայն ընդհանուր իրավասության դատարան դիմելու և գործը լուծող դատական ակտ ստանալու հնարավորությամբ: Դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը ենթադրում է նաև կայացված դատական ակտի վերանայման, դրա հետևանքով ստորադաս դատարանի թույլ տված սխալները ուղղելու հնարավորություն: Թեև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, իր 1995 թ. թիվ R (95)5 հանձնարարականում խոսելով քաղաքացիական և առևտրային գործերով բողոքարկման համակարգերի և ընթացակարգերի ներդրման ու բարելավման կատարելագործման մասին, չի պարտադրում պետություններին ունենալ երրորդ աստիճանի դատարաններ՝ նշելով միայն, որ գործնականում պետք է լինի ստորադաս դատարանի (առաջին աստիճանի) ցանկացած որոշման նկատմամբ վերադաս դատարանի կողմից (երկրորդ աստիճանի, ՀՀ-ի դեպքում՝ վերաքննիչ դատարանի) վերահսկողության հնարավորություն, միաժամանակ ընդգծում է, որ եթե պետությունները նախատեսել են երրորդ աստիճանի դատարաններ, ապա հանձնարարականում տեղ գտած դրույթները պետք է տարածվեն նաև դրանց վրա՝ այն բացառություններով, որոնք նախատեսված են նույն հանձնարարականով<sup>1</sup>: Այսինքն՝ անհերքելի է, որ դատական երրորդ աստիճանում, Հայաստանի Հանրապետության դեպքում՝ վճռաբեկ դատարանում, նույնպես ամբողջությամբ պետք է գործեն դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության սկզբունքները՝ այն առանձնահատկություններով, որոնք բնորոշ են այս աստիճանում գործի քննությանը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մինչև այս աստիճանը գործն արդեն իսկ քննված է լինում ստորադաս երկու աստիճաններում:

<sup>1</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականը անդամ պետություններին քաղաքացիական և առևտրային գործերով բողոքարկման համակարգերի և ընթացակարգերի ներդրման և կատարելագործման մասին: <https://rm.coe.int/1680505f3c>

Կասկածից վեր է, որ վճռաբեկ աստանում դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի իրացումը առաջին հերթին պայմանավորված է այս դատարան դիմելու մատչելիությամբ: Այս տեսանկյունից առաջնային նշանակություն ունի այն հիմքերի հստակ և սպառիչ սահմանումը, որոնց առկայության դեպքում վճռաբեկ դատարանը կարող է սահմանափակել անձի իր գործը վճռաբեկության կարգով վերանայելու իրավունքը: ԵՎ ՀՀ քաղաքացիական դատավարության, և՛ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերը նախատեսում են երեք տեսակ հիմքեր, որոնց դեպքում վճռաբեկ դատարանը վարույթ չի ընդունում վճռաբեկ բողոքը՝ մի դեպքում վերադարձնելով այն, մյուս դեպքում՝ մերժելով դրա ընդունումը և երրորդ դեպքում՝ առանց քննության թողնելով այն: Դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել խնդրահարույց են վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու գործառույթը և դրա հիմքերը:

Խոսքը հատկապես վերաբերում է վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու այն հիմքին, երբ բողոքը բերվել է դրա համար սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն չի ներկայացվել, կամ այդպիսի միջնորդությունը վճռաբեկ դատարանը մերժել է: Բավական է նշել միայն, որ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու այս հիմքը նախատեսված է Հայաստանի Հանրապետության դատավարական երեք օրենսգրքերում էլ՝ վարչական դատավարության (160 հոդված, 1-ին մաս, 1-ին կետ), 1998 թ. քաղաքացիական դատավարության (233.1 հոդված, 1-ին մաս, 1-ին կետ) (2018 թ. ընդունված քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքով բողոքը դրա համար սահմանված ժամկետը լրանալուց հետո բերելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն չներկայացվելու հիմքը իրավացիորեն նախատեսվել է որպես վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմք, սակայն այդ մասին մի փոքր ուշ) և քրեական դատավարության (414.1 հոդված 2-րդ մաս 1-ին ենթակետ): Նշյալ երեք օրենսգրքերի այս իրավակարգավորումների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցն էլ բարձրացվել է Սահմանադրական դատարանի առջև: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նշված իրավակարգավորումը նախատեսող 160 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրականության հարցին անդրադարձել է 09.02.2016 թ.՝ իր ՍԴՌ-1254 որոշմամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի սահմանադրականության հարցին՝ 22.12.2015 թ.՝ իր ՍԴՌ-1249 որոշմամբ, ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 233.1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրականության հարցին՝ 06.09.2016 թ.՝ իր ՍԴՌ-1296 որոշմամբ<sup>2</sup>:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 06.09.2016 թ. թիվ ՍԴՌ-1296 որոշումը, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2016.09.14/68(1248), հոդ 1146:

Վերոնշյալ երեք գործերով էլ, սակայն, խոսքը ստորադաս դատարանի դատական ակտը ուչ ստանալու դեպքում բողոք բերելու բաց թողնված ժամկետը ի պաշտոնե /ex officio/ երկարաձգելու վերադաս դատարանի պարտականության մասին է՝ համապատասխան միջնորդության առկայության դեպքում, իսկ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու ինստիտուտի նպատակահարմարությանը, ինչպես նաև քաղաքացիական և վարչական օրենսգրքերով այս ինստիտուտի կարգավորումներին ու դրանց միջև առկա հակասություններին ՀՀ սահմանադրական դատարանը չի անդրադարձել:

Միայն ՄԴՈ-1296 որոշման մեջ է Մահմանադրական դատարանը որոշ չափով անդրադարձել ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքով նախատեսված վճռաբեկ բողոքը դրա համար սահմանված ժամկետը լրանալուց հետո բերելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունն չներկայացվելու հիմքով բողոքն առանց քննության թողնելու վճռաբեկ դատարանի լիազորությանը՝ մտահոգություն հայտնելով, որ այդ դրույթը հստակ չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունն չներկայացնելու հիմքով վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու և որոշակի ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն<sup>3</sup>: Եվ իսկպպես, ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին՝ 1998 թ. օրենսգիրքը<sup>4</sup> չէր պատասխանում այն հարցին՝ արդյո՞ք վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելուց հետո բողոքաբերն իրավունք ունի բողոքում առկա թերությունները վերացնելու և կրկին ներկայացնելու\* : Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ գործով դիմումատուների՝ առաջին անգամ ներկայացրած բողոքն առանց քննության թողնելուց հետո վճռաբեկ դատարանը երկրորդ անգամ ներկայացրած բողոքը թողել էր առանց քննության ոչ թե բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունն չներկայացնելու հիմքով, այլ այն հիմքով, որ երկրորդ անգամ բերված վճռաբեկ բողոքում ներառված միջնորդությամբ բողոք բերած անձը որևէ հիմնավոր փաստարկ չէր ներկայացրել վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու վերաբերյալ, հետևաբար բողոք բերած անձը բաց էր թողել վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետն առանց հարգելի պատճառների, ՀՀ սահմանադրական դատարանը ՄԴՈ-1296 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգր-

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 06.09.2016 թ. թիվ ՄԴՈ-1296 որոշման 7-րդ մասը, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2016.09.14/68(1248), հոդ. 1146:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունված 17.06.1998 թ., ուժը կորցնելու ամսաթիվը՝ 09.04.2018 թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

\* Բացի այն բանից, որ օրենսդրորեն չէին նախատեսվել վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հետևանքները, անհասկանալի էր և է նաև այն հարցը, թե ինչպես է վճռաբեկ դատարանը առանց քննության թողնում բողոքը, երբ այն դեռևս չի ընդունել վարույթ, և չի սկսվել դրա քննությունը: Մա վերաբերում է նաև ներկա իրավակարգավորմանը:

քի 233.1 հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասություն չէր գտել՝ վճռաբեկ բողոքը առաջին անգամ բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով առանց քննության թողնելուց հետո երկրորդ անգամ ներկայացնելու հնարավորության մասով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանը, ըստ էության, ընդունել էր, որ վճռաբեկ բողոքը բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդության բացակայության հիմքով առանց քննության թողնելուց հետո անձը պետք է հնարավորություն ունենա սխալները շտկելու և կրկին բողոքը ներկայացնելու:

Մեր համոզմամբ՝ վճռաբեկ բողոքը ժամկետից ուշ բերելու և բացթողումը հարգելի ճանաչելու միջնորդություն չներկայացնելու հիմքով բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՄԴ մտահոգությունը խիստ տեղին էր: Եթե ՀՀ քաղաքացիական դատավարության ինչպես նախկին, այնպես էլ նոր օրենսգրքով նախատեսված է, որ «Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում վճռաբեկ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին», կարծում ենք՝ որևէ կերպ չի կարող արդարացվել վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելը և այն հարգելի ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը չներկայացնելը բողոքն առանց քննության թողնելու հիմքերի մեջ ներառելը: Կարծում ենք՝ ակնհայտ է, որ նման միջնորդությունը բողոքը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու դեպքում նույնպես վճռաբեկ բողոքի բովանդակության մի մասն է, որը կարող է վճռաբեկ բողոքից դուրս մնալ տեխնիկական կամ այլ պատճառներով այնպես, ինչպես վճռաբեկ բողոքի բովանդակությանը ներկայացվող մյուս պահանջները կամ կցվող փաստաթղթերից որևէ մեկը, այնինչ վերջիններիս դեպքում բողոքը վերադարձվում էր (է), և անձը հնարավորություն է ունենում սխալները շտկելու և բողոքը կրկին ներկայացնելու, իսկ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հետևանքների վերաբերյալ կարգավորումը նախկին օրենսգրքով բացակայում էր: Վճռաբեկ դատարանը նշված հարցով կայացնում էր ոչ միատեսակ որոշումներ՝ հաճախ սահմանափակելով վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելուց հետո երկրորդ անգամ բողոք ներկայացնելու՝ անձի իրավունքը այն հիմքով, որ անձը գրկված չի եղել վճռաբեկ բողոք բերելու՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն առաջին անգամ ներկայացնելու հնարավորությունից՝

Նշված տարբերություններից և հակասություններից խուսափելու համար 2018 թ. ընդունված քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքով օրենսդիրը վճռաբեկ բողոքը դրա համար սահմանված ժամկետը լրանալուց հետո բերելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն չներկայացնելը իրավացիորեն նախատեսեց վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերի շարքում, իսկ բաց թողն-

<sup>5</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի ՎԴ/8134/05/13 և ՎԴ/0209/05/14 գործերով որոշումները:

ված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելը՝ բողոքն առանց քննության թողնելու հիմքերի շարքում (հոդված 393)<sup>6</sup>:

Թվում էր, թե այսքանով խնդիրը կարելի էր համարել լուծված, սակայն դա միայն առաջին հայացքից, իրականում ամեն ինչ էլ ավելի է խճճվել: Բանն այն է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը վճռաբեկ բողոքը դրա համար սահմանված ժամկետը լրանալուց հետո բերելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն չներկայացնելը ներկայումս էլ նախատեսում է որպես վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմք<sup>7</sup>: Եվ նույն օրենսգրքի 160-րդ հոդվածի 3-րդ կետը հնարավորություն է տալիս բողոք բերող անձին բողոքն առանց քննության թողնելուց հետո թերությունները շտկելու և այն կրկին ներկայացնելու սակայն դա խնդիրը չի լուծում: Ստացվում է մի իրավիճակ, երբ վճռաբեկ դատարանի նույն քաղաքացիական և վարչական պայատր նույնական գործերով վճռաբեկ բողոքը դրա համար սահմանված ժամկետը լրանալուց հետո բերելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն չներկայացնելու դեպքում պետք է կայացնի լիովին տարբեր որոշումներ՝ մի դեպքում վերադարձնելով բողոքը՝ քաղաքացիական գործերով, մյուս դեպքում՝ առանց քննության թողնելով այն՝ վարչական գործերով: Սակայն սա էլ ամենը չէ: Թեև քաղաքացիական դատավարության նոր օրենսգիրքը նախկին օրենսգրքի նման կրկին հստակ չի սահմանում բողոքն առանց քննության թողնելու հետևանքները, այլ կերպ ասած՝ չի պատասխանում այն հարցին, թե արդյոք անձն իրավունք ունի բողոքն առանց քննության թողնելուց հետո կրկին բողոք ներկայացնելու, սակայն վերլուծելով օրենսգրքի վճռաբեկ բողոքը վերադարձնելուն վերաբերող 395 հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ Վճռաբեկ դատարանը սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ բողոքում առկա թերությունները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար», ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ վճռաբեկ բողոքը առանց քննության թողնելուն և վերադարձնելուն վերաբերող հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում՝ նշելով առկա թերությունները: Վճռաբեկ բողոքը կրկին բերվելու դեպքում ժամկետները հաշվարկվում են վերստին», ինչպես նաև այն հանգամանքը, որ քաղաքացիական դատավարության օրենսգրքով վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելուն վերաբերող 396 հոդվածում նման կարգավորումը բացակայում է, կարելի է վստահորեն պնդել, որ

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունված 09.02.2018 թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2018.03.05/16(1374):

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված 05.12.2013 թ., ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1:

քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքում օրենսդիրը հրաժարվել է վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելուց հետո այն կրկին ներկայացնելու հնարավորության մտքից, ինչը, մեր կարծիքով, տրամաբանական է. ակնհայտ է, որ օրենսդրորեն երկու տարբեր հողվածներով կարգավորվող վճռաբեկ դատարանի երկու տարբեր գործառույթները չեն կարող ունենալ միևնույն իրավական հետևանքները: Եթե ն՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու, և՛ այն առանց քննության թողնելու հետևանքները պետք է նույնը լինեն, այսինքն՝ երկու դեպքում էլ բողոքաբերը պետք է ունենա սխալները շտկելու և այն կրկին ներկայացնելու իրավունք, ապա անհասկանալի է՝ ինչ նպատակ ունի այս երկու գործառույթները տարանջատելը: Մինչդեռ, ինչպես նշվեց, վարչական դատավարության օրենսգրքը վճռաբեկ դատարանի այս լիազորությունների կիրառման հետևանքներն ամբողջությամբ նույնացնում է: Դրա հետևանքով ստացվում է, որ վճռաբեկ դատարանի նույն պալատի նույն՝ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու որոշումը, կախված այն բանից, թե բողոքը ինչ գործով է բերվել՝ քաղաքացիական, թե՛ վարչական, ունենում է տրամագծորեն հակառակ հետևանքներ. մի դեպքում անձը զրկվում է բողոքը կրկին ներկայացնելու հնարավորությունից, մյուս դեպքում՝ կարող է թերությունները շտկել և կրկին ներկայացնել:

Նման իրավիճակը, մեր կարծիքով, անթույլատրելի է, հակասում է իրավական որոշակիության սկզբունքին և պետք է շտկվի հնարավորինս արագ: Միաժամանակ, համոզված ենք, որ այս իրավիճակի լուծումը ոչ թե երկու օրենսգրքերում վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելուն վերաբերող հողվածները փոփոխելը և միատեսակություն ապահովելն է, այլ ընդհանրապես այս ինստիտուտից հրաժարվելը:

Այսպես, մեր համոզմամբ՝ վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վարույթ չընդունելը կարող է բերել միայն երկու հետևանք. 1. բողոքաբերը հնարավորություն է ունենում որոշակի ժամանակահատվածում վերացնելու բողոքը չընդունելու պատճառները և կրկին ներկայացնելու այն, 2. բողոքաբերը զրկվում է բողոքը կրկին ներկայացնելու հնարավորությունից: Այլ հետևանք վճռաբեկ բողոքը վարույթ չընդունելը բողոքաբերի համար չի կարող առաջացնել: Իսկ նշված հետեվանքները, ներկա իրավակարգավորումների համաձայն, բողոքաբերի համար առաջանում են առաջին դեպքում՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելիս, երկրորդ դեպքում՝ վճռաբեկ բողոքը մերժելիս: Դրա հետեվանքով բաց է մնում վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելիս բողոքաբերի համար առաջացող հետևանքների, ինչպես նաև վճռաբեկ դատարանին ընդհանրապես նման լիազորություն տալու նպատակահարմարության հարցը: Խոսքն այստեղ *մինչև բողոքը վճռաբեկ դատարանի կողմից վարույթ չընդունելը բողոքն առանց քննության թողնելու լիազորության* մասին է:

Հատկանշական է, որ մինչև 2014 թ. ՀՀ քաղաքացիական դատա-

վարության օրենսգիրքն ընդհանրապես չէ նախատեսում վճարել դատարանի՝ վճարել բողոքն առանց քննության թողնելու գործառույթ, իսկ վճարել բողոք օրենքով նախատեսված ժամկետից ուշ ներկայացնելու և այն վերականգնելու մասին միջնորդությունը չներկայացնելու կամ վճարել դատարանի կողմից միջնորդությունը մերժելու հիմքը նախատեսված էր որպես վճարել բողոքը վերադարձնելու հիմք: Վճարել բողոքը վերադարձնելու հիմքերի մեջ նախատեսված էին նաև վճարել բողոքը այն ներկայացնելու իրավունք չունեցող անձի կողմից ներկայացնելը, վճարելության կարգով բողոքարկման ոչ ենթակա դատական ակտը բողոքարկելը և այլն, որոնք ներկայումս նախատեսված են որպես վճարել բողոքն առանց քննության թողնելու հիմք: Վճարել բողոքն առանց քննության թողնելու հնարավորությունը 1998 թ. ՔԴՕ-ում նախատեսվեց միայն 2014 թ. հունիսի 10-ի լրացումներով՝ 233.1 հոդվածով: Ընդ որում, ՀՀ կառավարությունը այս լրացման անհրաժեշտությունը հիմնավորել է հետևյալ կերպ. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նախատեսված է միայն բողոքը վերադարձնելու որոշումը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով՝ ինչպես բողոքը վերադարձնելու, այնպես էլ առանց քննության թողնելու մասին որոշումը: Վճարել բողոքը վարույթ ընդունելու բովանդակային հիմքերին չհամապատասխանելու հիմքով վերադարձվելու դեպքում վճարել դատարանը կայացնում է «վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշում», որը, մեր կարծիքով, նույնպես ճիշտ չէ: Ուստի անհրաժեշտ է օրենսդրական փոփոխությունների միջոցով շտկել այդ թերությունները և միատեսակություն ապահովել տարբեր դատավարություններում»<sup>8</sup>:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ վերոնշյալ հիմնավորման մեջ տեղ գտած այն միտքը, թե ճիշտ չէ, որ վճարել դատարանը վճարել բողոքը վարույթ ընդունելու բովանդակային հիմքերին չհամապատասխանելու հիմքով վերադարձվելու դեպքում կայացնում է «վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշում», վերաբերում է վճարել դատարանին բողոքը մերժելու լիազորություն տալու անհրաժեշտությանը, ինչը և նախատեսվել է նշված փոփոխությամբ, և օրենսգիրքը լրացվել է նաև «Վճարել բողոքը վարույթ ընդունելը մերժելը» վերտառությամբ 233.2 հոդվածով: Այսինքն՝ ստացվում է, որ օրենսդրորեն վճարել դատարանի՝ վճարել բողոքն առանց քննության թողնելու գործառույթ նախատեսելու հիմքում դրվել է զուտ քրեական և քաղաքացիական դատավարություններում միատեսակություն ապահովելու՝ մեզ համար անհասկանալի անհրաժեշտությունը: Ստացվում է մի իրավիճակ, երբ դատավարություններում միատեսակություն ապահովելու համար նախատեսվել է վճարել դատարանի մի գործառույթ, որի հետևանքները հստակ նախատեսված չեն կամ ամբողջությամբ նույնանում են

<sup>8</sup> [http://www.parliament.am/draft\\_docs5/K-374lr\\_himnavorum.pdf](http://www.parliament.am/draft_docs5/K-374lr_himnavorum.pdf)

վճռաբեկ դատարանի այլ գործառույթների՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու, վարչական դատավարության օրենսգրքով՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հետևանքներին, ինչն էլ իր հերթին հանգեցնում է իրավական անորոշության և, ինչպես տեսանք, դատական պրակտիկայում տեղիք է տալիս հակասությունների:

Մյուս կողմից էլ, նախկին՝ մինչև 2014 թ. հունիսի 10-ի փոփոխությունները առկա կարգավորումը, ըստ որի՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում էր, երբ այն ներկայացրել էր այն անձը, ով վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք չուներ, կամ վճռաբեկ բողոք ներկայացվել էր օրենքով նախատեսված ժամկետից ուշ, և այն վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել էր, կամ բողոքարկվել էր այն դատական ակտը, որը ենթակա չէր բողոքարկման վճռաբեկության կարգով, ևս տրամաբանական չէր, քանի որ, ինչպես հայտնի է դատավարագիտության մեջ, հայցը, դիմումը, բողոքը դատարանները վերդարձնում են, որպեսզի հայցվորը, դիմողը կամ բողոքաբերը ունենան դրանց մեջ տեղ գտած սխալները շտկելու և դրանք կրկին ներկայացնելու հնարավորություն: Մինչդեռ, երբ վճռաբեկ դատարանն արդեն իսկ մերժել է վճռաբեկ բողոքարկման ժամկետը հարգելի ճանաչելու վերաբերյալ բողոքաբերի միջնորդությունը, կամ բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման, ինչ իմաստ ունի նման դեպքերում կայացնել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում: Հետևաբար՝ այս հիմքերը վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերի ցանկից պետք է հանվեին, բայց դրանք նախատեսել որպես վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմք, մեր կարծիքով, ևս ճիշտ չէ:

Հետևաբար, մեր համոզմամբ, անհրաժեշտ էր ընդհանրապես հրաժարվել **մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը վճռաբեկ դատարանին բողոքն առանց քննության թողնելու լիազորություն տալու գաղափարից**, իսկ վերոնշյալ հիմքերը, ըստ որոնց՝ վճռաբեկ բողոքը ներկայացրել է այն անձը, ով վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք չունի, բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վճռաբեկության կարգով, կամ վճռաբեկ բողոք ներկայացվել է օրենքով նախատեսված ժամկետից ուշ, և այն վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է, պետք է նախատեսվեին որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու հիմք:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ վերջին դեպքում խոսքը միայն վճռաբեկ բողոքը օրենքով նախատեսված ժամկետից ուշ ներկայացնելու և այն վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը վճռաբեկ դատարանի կողմից մերժելու մասին է, այնինչ վճռաբեկ բողոքն օրենքով նախատեսված ժամկետից ուշ բերելը և այն վերականգնելու մասին միջնորդություն չներկայացնելը, ինչպես իրավացիորեն նախատեսվել են քաղաքացիական դատավարության օրենսգրքով, վարչա-



կան դատավարության օրենսգրքով էլ պետք է նախատեսվեն որպես վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմք:

ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքում որպես բողոքն առանց քննության թողնելու հիմք նախատեսված վճռաբեկ բողոք ներկայացրած անձի կողմից վճռաբեկ բողոքը հետ վերցնելու մասին դիմում ներկայացնելը մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման կայացումը ևս, մեր կարծիքով, բողոքը վերադարձնելու տիպական հիմք է, և պետք է նախատեսվի վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերի շարքում, մինչդեռ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396 հոդվածով նախատեսված մնացած բոլոր հիմքերը պետք է նախատեսվեն որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու հիմք: Արդյունքում, և որ ամենակարևորն է, մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը այն առանց քննության թողնելու վճռաբեկ դատարանի լիազորությունը օրենսդրական կարգավորումներից պետք է հանել: Ամբողջությամբ նույն կարգավորումը պետք է նախատեսել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում:

*Բանալի բառեր - վճռաբեկ բողոք, վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը, վճռաբեկ բողոքը վերադարձնելը, վճռաբեկ բողոքի ընունումը մերժելը, բողոքը բերել, օրենքով սահմանված ժամկետների խախտումը*

**ПАВЕЛ ТАДЕВОСЯН – Проблемы реализации полномочий Кассационного суда РА в гражданском и административном судопроизводстве при подаче жалобы с нарушением требований закона.** – В статье рассмотрены функции Кассационного суда РА, применяемые при подаче кассационной жалобы, которая не соответствует требованиям закона. Утверждается, что из трёх функций, закрепленных в Гражданско-процессуальном и Административно-процессуальном кодексах Армении, наиболее проблематично оставление кассационной жалобы без рассмотрения. Отказ принять жалобу к производству влечёт за собой два последствия: 1. податель жалобы может устранить причины отказа и принести её повторно; 2. податель жалобы лишается возможности предъявить её повторно. Указанные последствия согласно существующему регулированию возникают, во-первых, при возврате кассационной жалобы, во-вторых, при её отклонении. В результате открытым остается вопрос последствий, возникающих для подателя жалобы, а также вопрос о целесообразности передачи Кассационному суду таких полномочий. В статье предложено отказаться от их предоставления и исключить подобное регулирование из Гражданско-процессуального и Административно-процессуального кодексов РА.

**Ключевые слова:** кассационная жалоба, оставить кассационную жалобу без рассмотрения, отклонение кассационной жалобы, недоставление жалобы с нарушением процессуальных сроков, установленных законом

**PAVEL TADEVOSYAN – The Issues of Exercising the Powers of the Court of Cassation in Civil and Administrative Proceedings in Case of Filing a Cassation Complaint with Violations of the Requirements of the Law.** – The article discusses the

functions of RA Court of Cassation which are applied when the cassation complaint submitted does not comply with the requirements of the law. In the article the Author finds that among the three types of decisions enshrined in the Codes of Civil Procedure and Administrative Procedure the function of leaving the cassation appeal without examination is the most problematic one. Speaking about the legal consequences of the decision of the Cassation Court to leave the cassation appeal without examination, the author notes that these consequences are completely different in the Civil Procedure and Administrative Procedure Codes, in particular, under the Administrative Procedure Code, the person has the right re-submit the cassation appeal after eliminating the reasons for leaving the appeal without the examination while under the Civil Procedure Code there is no such right, which creates legal confusion as both decisions are made by the same Civil and Administrative Chamber of the Cassation Court. Author concludes that there should be only two consequences if the Cassation Court does not admit the cassation appeal into proceedings: 1) the appellant has an opportunity to eliminate the reasons for not admitting the appeal into proceedings and to lodge it again; and 2) the appellant is deprived of any opportunity to lodge the appeal again. In addition, in case of the aforementioned consequences, under current legal regulations, the first one is caused when returning the cassation appeal and the second one when rejecting the cassation appeal. As a result of this, the question of the consequences for the appellant when leaving the appeal without examination is being left unanswered as well as the reasonability and expediency of this function vested with the Cassation Court. Thus the Author suggests to exclude the power of the Cassation Court to leave the cassation appeal without examination before admitting it into proceedings, and to remove this regulation from the RA Civil Procedure and Administrative Procedure Codes. Two of the grounds for leaving a cassation appeal without examination, must be foreseen as grounds for returning the cassation appeal, and the other grounds as a ground for rejecting the cassation appeal.

**Key words:** *Cassation appeal, leaving cassation appeal without examination, returning cassation appeal, denial of cassation appeal, appeal in violation of statutory time limits*